պաշարել էին ինձ, որ ես բոլորովին մոռացել էի վարժապետիս սպառնալի պատիժը, որ սպասում էր ինձ մի քանի ժամից յետոյ: Զարմանալի՜ հակասութիւն: Նա պիտի պատժէր ինձ, նա պիտի բարբարոսի նման նահատակէր ինձ, այն խօսքերից յետոյ, որ այսօր աստծոյ սուրբ սեղանից, իբրեւ քահանայ, պիտի աւետէր աշխարհին — «քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահոամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Իսկ իմ բանտը՞... ես իմ անձնամոռացութեան մէջ դեռ նրան ուշադրութեան չէի առել: Չնայելով, որ ապրիլ ամիսն էր, բայց շոգերը սկսել էին արդէն: Գոմը, ուր բանտարկուած էի ես, լիքն էր զանազան միջատներով, որոնք իրանց սուր խայթոցները խրում ու խրում էին մարմնիս մէջ: Մի կողմից անասունների հոտած աղբի արտաշնչութիւնը խեղդում էր ինձ, միւս կողմից սիրտս թուլանում էր քաղցածութիւնից: Ողորմա՜ծ աստուած, ի՞նչ անէի, փախչել չէի կարող. դուռը ամուր կերպով փակած էր. իսկ համբերել այն տարտարոսի մէջ, — մահուան չափ սպանիչ էր...

Արեւը վաղուց արդէն մտել էր. խաւարը աւելի եւ աւելի թանձրանում էր գոմի մէջ: Ես բոլորովին կատաղեցայ, ինձ տիրեց մի տեսակ խելագարութիւն: Երկաթէ վանդակի մէջ նոր բռնուած գազանի նման, ես այս կողմ եւ այն կողմ էի թռչում, աշխատում էի մատներով քանդել պատերը, խորտակել սիւները, ծակել առաստաղը, կոտրել դուռը, լայնացնել նեղ լուսամուտները, որ մի հնար գտնեմ ազատուելու: Այդ կռիւը տեւեց մի քանի ժամ, մինչեւ ես բոլորոին յոգնեցայ, թուլացայ եւ վեր ընկայ յատակի վրայ: Այդ միջոցին ինձ տիրեց երեւակայութեան բորբոքումը եւ հրէշաւոր ցնորքների խառնափնթորութիւնը: Տատիս հէքիաթների մէջ լսած եօթնգլխանի վիշապները, եղջիւրաւոր դեւերը, պոչաւոր սատանաները, ահագին խումբերով գալիս ու գնում էին աչքիս առջեւ: Մտածում էի ահա խաւարը բոլորովին կպատէ, եւ դրանք կը խեղդեն ինձ...

Թէ քանի՞ ժամ ես մնացի այդ տենդային դրութեան մէջ, — չգիտեմ. միայն լսեցի, յանկարծ դուռը ճռաց: Ես ամբողջ մարմնով սարսափեցայ: Բայց սոսկումն անցաւ շուտով: Տեսնում ես, ներս է մտնում Սոնան, մի այցելու հրեշտակի նման, ձեռքում բռնած իւղային ճրագը: Նա վեր բարձրացրեց ինձ ընկած տեղիցս, եւ նրա քնքուշ ձայնը բոլորովին սթափեց ինձ:

— Փախի՛ր, Ֆարհատ, — ասաց նա, — փախի՛ր, քանի հայրս տանը չէ...

Ես կամեցայ գրկել, համբուրել իմ ազատչին, բայց նա ոգիների նման աներեւոյթ եղաւ: